



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ  
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

25 մայիսի 2017 թվականի N 22

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԱՂԵՏԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 758-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ կետի՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սողանքային աղետի կառավարման պլանին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2017 թ. մայիսի 31  
Երևան



ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պ Լ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԱՂԵՏԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պլանի մշակման հիմք են հանդիսանում «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ և 13-րդ հոդվածները, որի նպատակն է նվազեցնել սողանքային աղետի ռիսկերն ու վնասները՝ ձեռնարկելով համապատասխան հակասողանքային միջոցառումներ:

2. Սույն պլանն ուղղված է սողանքային աղետի կառավարման համակարգում ընդգրկված մարմինների կարողությունների զարգացմանը, նրանց միջև խնդիրների բաշխման և համագործակցության կազմակերպման հարցերի կարգավորմանը, ինչպես նաև անհրաժեշտ միջոցների (ֆինանսական ռեսուրսների) ու տեղեկատվության կառավարման բարելավմանը:

3. Պլանում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) *սողանք*՝ ծանրության ուժի ազդեցության տակ լեռնային ապարների զանգվածի սահող տեղաշարժ լանջն ի վար, տարբեր պատճառներով առաջացող հավասարակշռության խախտման հետևանքով,

2) *ստավել վրանգավոր փեղամաս*՝ սողանքային տեղամաս, որին, մասնագիտական ուսումնասիրության եզրակացության հիման վրա, տրվել է վտանգավորության առաջին աստիճան,

3) *սողանքային աղեղ*՝ սողանքի հետևանքով որոշակի տարածքում ստեղծված իրադրություն, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի կամ ուղեկցվել մարդկային զոհերով, վնաս հասցնել մարդկանց առողջությանը և/կամ շրջակա բնական միջավայրին, պատճառել զգալի նյութական կորուստներ և խախտել մարդկանց բնականոն կենսագործունեության պայմանները,

4) *սողանքային աղեղի կառավարում*՝ բնակչության կյանքին, առողջությանը, շրջակա բնական միջավայրին, կենսաապահովման օբյեկտներին և ենթակառուցվածքներին սողանքային երևույթներից սպառնացող վտանգի հետագոտման, մշտական դիտարկման (մոնիտորինգի), պաշտպանական միջոցառումների մշակման, իրականացման ու անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների (աշխատանքների) ամբողջ համալիրի կազմակերպում ու հետևողական իրականացում,

5) սողանքային աղեղի կառավարման համակարգ - պետական ռազմավարության վրա հիմնված համակարգ, որն իր մեջ ներառում է փոխհամաձայնեցված գործող համապատասխան կառավարման մարմիններին պատվիրված գործառույթների շրջանակներում իրականացվող միջոցառումների համալիր:

## II. ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Սողանքային աղեղի դեմ պայքարում համակարգված մոտեցման համար պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները տարանջատելու նպատակով սողանքային տեղամասերը, ըստ իրենց ազդեցության ոլորտների, անհրաժեշտ է դասակարգել հետևյալ նշանակությունների՝

1) հանրապետական նշանակության՝ հանրապետության կենսագործունեությունն ապահովող, ռազմավարական և հանրապետական նշանակության սոցիալ-տնտեսական օբյեկտներին և հաղորդակցուղիներին վնասող և սպառնացող սողանքներ.

2) մարզային նշանակության՝ մարզային նշանակության օբյեկտներին վնասող և սպառնացող սողանքներ: Այս խմբի մեջ մտնում են նաև երկու և ավելի համայնքների տարածքներին սպառնացող սողանքները.

3) համայնքային նշանակության՝ համայնքի տարածքին, օբյեկտներին և հաղորդակցուղիներին վնասող և սպառնացող սողանքներ:

5. Սողանքային երևույթների դասակարգումից բխում է իրավասությունների հետևյալ տարանջատումը՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա. հաստատում է սողանքային աղետի դեմ պայքարի նպատակային համալիր ծրագրեր,

բ. ապահովում է ընդունված հակասողանքային միջոցառումներ համալիր ծրագրի ֆինանսավորումը.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ)՝

ա. կազմակերպում և համակարգում է սողանքային աղետի դեմ պայքարի բնագավառում համապատասխան ոլորտների պետական կառավարման մարմինների գործունեությունը: Սողանքային օբյեկտների բացահայտման, դասակարգման և կանխարգելիչ միջոցառումների իրականացման կազմակերպման բնագավառում հանդիսանում է պետական կառավարման լիազոր մարմին,

բ. ստեղծում և կատարելագործում է հանրապետության տարածքի սողանքային աղետների առաջացման և զարգացման տեղեկատվական բազան, տրամադրում տեղեկատվություն և խորհրդատվություն,

գ. համակարգում և ամփոփում է սողանքային աղետի դեմ պայքարի բնագավառում համապատասխան ոլորտների պետական կառավարման ու տեղական

ինքնակառավարման մարմիններից ստացված մոնիթորինգի արդյունքները և մշտական հսկողություն է իրականացնում սողանքային երևույթների զարգացումների նկատմամբ,

դ. ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմինների հետ համատեղ իրականացնում է ռիսկային օբյեկտների խմբավորում, առկա և պոտենցիալ վնասների գնահատում,

ե. ամփոփում է ոլորտային բյուջետային ֆինանսավորման միջնաժամկետ ծախսային ծրագրերը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,

զ. անհրաժեշտ տվյալների բազայի առկայության դեպքում ոլորտային ծրագրերի ամփոփման հիման վրա մշակում է սողանքային աղետի դեմ պայքարի նպատակային համալիր ծրագրի նախագիծ և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը,

է. կազմակերպում և համակարգում է սողանքային աղետի դեմ պայքարի բնագավառը կարգավորող օրենսդրական ակտերի մշակման գործընթացը.

3) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, նախարարության կանոնադրության 7-րդ կետի «ե» և «է» ենթակետերով սահմանված խնդիրներն իրականացնելու համար, մասնագիտացված, լիցենզավորված կազմակերպությունների միջոցով՝

ա. իրականացնում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, երկաթգծի ու կապի օբյեկտներին վտանգ սպառնացող սողանքների մոնիթորինգին,

բ. իրականացնում է տրանսպորտի և կապի ոլորտի օբյեկտներին սպառնացող սողանքային տեղամասերի գույքագրման աշխատանքներին և պարբերաբար թարմացնում դրանց ակտիվացումների մասին տեղեկատվական բազան,

գ. պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ (ելնելով սողաքավտանգ տարածքի ըստ նշանակության

դասակարգումից) իրականացնում է առավել վտանգավոր տեղամասերի մասնագիտական ուսումնասիրություններ, կանխարգելիչ միջոցառումների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի փաթեթի կազմման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաջնահերթ կանխարգելիչ միջոցառումներ.

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն կոմիտեի կանոնադրության 8-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանված խնդիրներն իրականացնելու համար և ելնելով 9-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գործառույթներից՝

ա. կազմակերպում և մասնագիտացված կազմակերպությունների միջոցով իրականացնում է բնակավայրերի կառուցապատված տարածքներին, բնակելի, հասարակական, արտադրական շենքերին ու շինություններին վտանգ սպառնացող սողանքների գույքագրում և մոնիթորինգ,

բ. պարբերաբար թարմացնում է իր ոլորտի օբյեկտներին սպառնացող սողանքային տեղամասերի վերաբերյալ տեղեկատվական բազան,

գ. դասակարգում է վտանգավոր տեղամասերն ըստ ռիսկայնության աստիճանի՝ լիցենզավորված կազմակերպությունների կողմից տրված սողանքային տեղամասերի և շենքերի ու շինությունների վնասվածության աստիճանի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա և կազմում կանխարգելիչ միջոցառումների պլան-ժամանակացույց,

դ. կազմակերպում է լիցենզավորված (գիտահետազոտական) կազմակերպությունների միջոցով առավել վտանգավոր սողանքային տեղամասերի մասնագիտական ուսումնասիրություններ, վերահսկում և անհրաժեշտության դեպքում ապահովում է կանխարգելիչ միջոցառումների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի մշակումը և աշխատանքների իրականացումը.

5) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, նախարարության կանոնադրության 8-րդ կետի 2-րդ և 30-րդ ենթակետերով սահմանված խնդիրներն իրականացնելու համար, մասնագիտացված, լիցենզավորված կազմակերպությունների միջոցով՝

ա. իրականացնում է էլեկտրամատակարարման օբյեկտներին, գազատարներին ու հանքավայրերին վտանգ սպառնացող սողանքների մոնիթորինգ,

բ. գույքագրում է իր ոլորտի օբյեկտներին սպառնացող սողանքային տեղամասերը և պարբերաբար թարմացնում դրանց ակտիվացումների մասին տեղեկատվական բազան,

գ. հաշվի առնելով ակտիվացումների դինամիկան՝ դասակարգում է վտանգավոր տեղամասերն ըստ ռիսկայնության աստիճանի և կազմում կանխարգելիչ միջոցառումների պլան-ժամանակացույց,

դ. իրականացնում է առավել վտանգավոր տեղամասերի մասնագիտական ուսումնասիրություններ, կազմում կանխարգելիչ միջոցառումների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի փաթեթ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իրականացնում առաջնահերթ կանխարգելիչ միջոցառումներ.

ե. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն իր ոլորտի օբյեկտներին վտանգ սպառնացող սողանքների տեղամասերի և դրանց ակտիվացումների մասին տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ ԱԻՆ:

6) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, նախարարության կանոնադրության 7-րդ կետի «ժբ» ենթակետով սահմանված խնդիրներն իրականացնելու համար և ելնելով 8-րդ կետի ժգ) և ժգ1) ենթակետերով սահմանված գործառույթներից, մասնագիտացված, լիցենզավորված կազմակերպությունների միջոցով՝

ա. իրականացնում է գետերին և սելավատարներին վտանգ սպառնացող սողանքների մոնիթորինգ,

բ. գույքագրում է իր ոլորտի օբյեկտներին սպառնացող սողանքային տեղամասերը և պարբերաբար թարմացնում դրանց ակտիվացումների մասին տեղեկատվական բազան,

գ. իրականացնում է առավել վտանգավոր տեղամասերի մասնագիտական ուսումնասիրություններ, կազմում կանխարգելիչ միջոցառումների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի փաթեթ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իրականացնում առաջնահերթ կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝ պարբերաբար մաքրում է գետերի և սելավատարների հուներն ու ամրացնում դրանց ավերը,

7) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, նախարարության կանոնադրության 7-րդ կետի «բ» և «ժ» ենթակետերով սահմանված խնդիրներն իրականացնելու համար և ելնելով 8-րդ կետի «իժ» ենթակետով սահմանված գործառույթներից, մասնագիտացված, լիցենզավորված կազմակերպությունների միջոցով՝

ա. իրականացնում է բնության հատուկ պահպանվող տարածքներին (բնության հուշարձան, արգելավայր, արգելոց) սպառնացող սողանքների մոնիթորինգ,

բ. գույքագրում է իր ոլորտի օբյեկտներին (որպես հնարավոր բնապահպանական աղետների աղբյուր) վտանգ սպառնացող սողանքների տեղամասերը և պարբերաբար թարմացնում դրանց ակտիվացումների մասին տեղեկատվական բազան.

8) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, նախարարության կանոնադրության 8-րդ կետի «4» ենթակետով սահմանված խնդիրներն իրականացնելու համար և ելնելով 9-րդ կետի 32)-րդ ենթակետի ա) պարբերությամբ սահմանված գործառույթներից, մասնագիտացված, լիցենզավորված կազմակերպությունների միջոցով՝



ա. իրականացնում է բնակավայրերի կառուցապատված տարածքներից դուրս գտնվող պատմամշակութային շենքերին և շինություններին վտանգ սպառնացող սողանքների մոնիթորինգ,

բ. գույքագրում է իր ոլորտի օբյեկտներին՝ պատմամշակութային շենքերին և շինություններին վտանգ սպառնացող սողանքների տեղամասերը և պարբերաբար թարմացնում դրանց ակտիվացումների մասին տեղեկատվական բազան.

9) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, նախարարության կանոնադրության 7-րդ կետի 10)-րդ ենթակետով սահմանված խնդիրներն իրականացնելու համար՝

ա. համակարգում է պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը սողանքային աղետի կառավարման բնագավառում,

10) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, նախարարության կանոնադրության 7-րդ կետի ա) ենթակետով սահմանված խնդիրն իրականացնելու համար կազմակերպում և իրականացնում է տուժածների շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում:

6. Սույն պլանում ներգրավված հանրապետական գործադիր մարմինները՝ (օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում)՝

1) իրենց լիազորությունների շրջանակներում մարզպետարանների ու համայնքների ղեկավարների կողմից ներկայացված ծրագրային առաջարկությունների հիման վրա մշակում են սողանքային աղետի բնագավառի վերաբերյալ իր պատասխանատվության տակ գտնվող ոլորտի ծրագրեր ու ներկայացնում ՀՀ ԱԻՆ՝ ամփոփ ծրագիրը կազմելու և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար.

2) կազմակերպում են համապատասխան ոլորտի օբյեկտներին սպառնացող սողանքների տեղամասերի հետազննության և կանխարգելիչ միջոցառումների ծրագրերի իրականացման աշխատանքները.

3) կազմակերպում և ցուցաբերում են մասնագիտական, մեթոդական և այլ կարգի տեխնիկական (խորհրդատվական) օժանդակություն մարզպետարաններին և համայնքների ղեկավարներին.

4) կազմակերպում են ոլորտում անհրաժեշտ իրավական ակտերի մշակումը և իրականացվող գործունեության հսկողությունը.

5) 6-ամսյա ժամկետում մշակում և ՀՀ ԱԻՆ-ի հետ համաձայնեցնում են սողանքային աղետի դեպքում իրենց գործողությունների պլանները՝ համաձայն ՀՀ ԱԻՆ-ի կողմից մշակված և տրամադրված ձևաչափի:

7. Մարզպետները՝ (օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում)

1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ բնագավառի համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմինն են ներկայացնում տեղեկատվություն սողանքային աղետի, դրա հետ կապված արտակարգ իրավիճակի կամ վտանգի մասին.

2) կազմակերպում են անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ.

3) կազմակերպում են մարզում անհրաժեշտ հետազննությունների ու միջոցառումների ծրագրերի մշակումը և ներկայացնում են համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմինն.

4) կազմակերպում են կառավարության կողմից ֆինանսավորվող (մասնակի կամ ամբողջությամբ) աշխատանքների իրականացումը.

5) աշխատանքների իրականացման և դրանց արդյունքների մասին իրազեկում են համապատասխան ոլորտի լիազոր մարմինն.

6) միջոցներ են ձեռնարկում սողանքների կանխարգելման համար ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավման ուղղությամբ:

8. Համայնքների ղեկավարները՝ (օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում)՝

1) մարզպետարանին են ներկայացնում տեղեկատվություն սողանքային աղետի, դրա հետ կապված արտակարգ իրավիճակի կամ վտանգի մասին.

2) կազմակերպում են քնակչության անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ.

3) կազմակերպում են համապատասխան միջոցառումների իրականացումը պետության կողմից համայնքներին, որպես սողանքային աղետի դեմ պայքարի աջակցման գումար՝ տրամադրվող գումարների հաշվին.

4) սողանքային աղետի դեմ պայքարի աշխատանքների իրականացման և դրանց արդյունքների մասին իրազեկում են մարզպետին, իսկ Երևանի քաղաքապետը՝ համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին.

5) միջոցներ են ձեռնարկում սողանքների դեմ պայքարի միջոցառումների իրականացման համար ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավման ուղղությամբ,

6) 6-ամսյա ժամկետում մշակում և ՀՀ ԱԻՆ-ի հետ համաձայնեցնում են սողանքային աղետի դեպքում իրենց գործողությունների պլանները՝ համաձայն ՀՀ ԱԻՆ-ի կողմից մշակված և տրամադրված ձևաչափի:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հայկական և օտարերկրյա կազմակերպություններն առանձին ոլորտների օբյեկտներ (երկաթգիծ, ճանապարհ, կապ, գազատար և այլն) կառավարման հանձնելու մասին մրցութային փաստաթղթերում ու պայմանագրերում պետք է նախատեսեն վտանգ սպառնացող սողանքային տեղամասերում անհրաժեշտ ուսումնասիրություններ, հակասողանքային

միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու մասին այդ կազմակերպությունների պարտավորություններ:

10. Սողանքային աղետի արձագանքման համակարգը ներառում է սույն պլանի 5-րդ կետում նշված հանրապետական գործադիր մարմինները, մարզպետարանները, համայնքապետարանները, (ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն) և Հայրուսգագարդ, Հայկական էլեկտրական ցանցեր, կապի օպերատորներ, խմելու/ոռոգման ջրի կազմակերպությունները: Սողանքային աղետի դեպքում բնակչության պաշտպանության ցանկացած միջոցառում ընկնում է մի քանի մարմնի պատասխանատվության շրջանակներում, և իրականացվում է համատեղ:

11. Հայաստանի Հանրապետությունում գործող շահագրգիռ կազմակերպությունները 6-ամսյա ժամկետում մշակում և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության տարածքային ստորաբաժանումների հետ համաձայնեցնում են սողանքային աղետի դեպքում իրենց գործողությունների պլանները:

### III. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (ՌԻՍԿԻ ՄԵԾԱՆԱԼՈՒ ՓՈՒԼ, ՄԱՄՆԱԿԻ ՓԼՈՒՋՄԱՆ ԵՎ ՎՆԱՄՆԵՐԻ ՓՈՒԼ, ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱՐ ՓԼՈՒՋՄԱՆ ԵՎ ՎՆԱՄՆԵՐԻ ՓՈՒԼ)

12. Սողանքային աղետի արձագանքումը բաժանվում է երեք հիմնական փուլերի՝ սողանքի ակտիվանալու ռիսկի առկայություն, սողանքի ակտիվացման հետևանքով մասնակի փլուզումների առաջացում և լայնամասշտաբ փլուզումներ:

Սողանքային աղետի արձագանքումն իրականացվում է ըստ սույն պլանով ներգրավված մարմինների պատասխանատվության ոլորտների:

Սողանքային աղետի առաջնային արձագանքումն իրականացվում է համայնքի կողմից, այնուհետև ներգրավելով մարզպետարանը և սողանքի պատճառով վնասված օբյեկտի (ավտոճանապարհ, կոմունալ և/կամ էներգետիկ ենթակառուցվածքներ, ինժեներա-

կան կառույցներ, բնակելի և ոչ բնակելի շինություններ, մշակույթային արժեքներ և այլն) ոլորտը կարգավորող հանրապետական գործադիր մարմինը և/կամ կազմակերպությունը:

Սողանքային աղետի արձագանքումը ժամանակին և արդյունավետ իրականացնելու նպատակով ներգրավված մարմինները մշակում են սողանքային աղետի ռիսկի նվազեցման ու կառավարման պլաններ: Պլաններում պետք է նախատեսվեն միջոցառումների համալիր վերը նշված երեք փուլերի համար:

#### IV. ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ

13. Սողանքի առաջացման դեպքում իրականացվող ազդարարումը կիրականացվի 3 դեպքում՝

1) սպառնալիքի դեպքում մոնիթորինգային սարքերի ակտիվացման միջոցով, բնակչության կողմից որոշակի փոփոխություններ նկատելու դեպքում ահազանգման միջոցով,  
 2) համայնքի ղեկավարի կողմից՝ որոշակի փոփոխություններ նկատելու դեպքում,  
 3) սողանքի ակտիվացման դեպքում մոնիթորինգային սարքերի ակտիվացման միջոցով, բնակչության կողմից ահազանգման միջոցով և համայնքապետարանի միջոցով:

14. Բոլոր դեպքերում ազդարարման ազդանշանը փոխանցվում է՝ համաձայն գործող պլանների կամ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն կամ ՀՀ ԱԻՆ տարածքային ստորաբաժանման ճգնաժամային կառավարման կենտրոնին:

15. Սողանքի սպառնալիքի կամ ակտիվացման դեպքում ազդարարման համար ընդհանուր պատասխանատու և իրականացնող մարմին է հանդիսանում ՀՀ ԱԻՆ-ն իր տարածքային ստորաբաժանումներով, որն իրականացնում է պետական կառավարման մարմինների, մարզպետարանների ու արձագանքող ստորաբաժանումների ազդարարում: Անմիջապես պատասխանատուն համայնքի ղեկավարն է, որն իրականացնում է բնակչության ազդարարումը: Սողանքի ակտիվացման դեպքում ՀՀ ԱԻՆ տարածքային

ստորաբաժանման ճգնաժամային կառավարման կենտրոնն իրականացնում է ազդարարում 2 տարբերակով՝

1) երբ տեղի է ունեցել սողանքի ակտիվացում մասնակի փլուզումներով, ազդարարվում են ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումները՝ որոնողափրկարարական և հրդեհաշիջման աշխատանքներ իրականացնելու նպատակով (եթե դրա կարիքը կա), վթարավերականգնողական ծառայությունները՝ ըստ առնչության (կախված սողանքի հետևանքով վնասված կոմունալ և/կամ էներգետիկ ենթակառուցվածքների հատվածներից), բժշկական ստորաբաժանումները, ոստիկանությունը՝ հասարակական կարգի պահպանման և երթևեկության կարգավորման նպատակով, մարզի ղեկավար կազմը:

2) երբ տեղի է ունեցել լայնամասշտաբ սողանք՝ սույն պլանի 15-րդ կետի 1-ին ենթակետում թվարկված բոլոր մարմինների ազդարարմանը կավելանան ՀՀ ԱԻՆ լրացուցիչ ստորաբաժանումների և տարահանման մարմինների, ինչպես նաև գյուղատնտեսության, մշակույթի ոլորտում պատասխանատու մարմինները:

16. Լայնամասշտաբ սողանքի դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը զեկուցում է ՀՀ վարչապետին, ում որոշմամբ էլ կարող է իրականացվել ՀՀ գործադիր մարմինների ղեկավարների ազդարարում:

Լայնամասշտաբ սողանքի սպառնալիքի կամ առաջացման դեպքում իրականացվում է բնակչության ազդարարում՝ նաև հարակից տարածքների բնակչության, վերջիններիս սողանքային գոտում չհայտնվելու, ինչպես նաև հարակից տարածքներում նմանատիպ երևույթների ակտիվացման դեպքում համապատասխան վարվելակերպի կանոնները կատարելու նպատակով:

17. Յուրաքանչյուր ազդարարված մարմնի ղեկավար (ոստիկանություն, բժշկական ստորաբաժանում, տարահանման մարմին և այլն) իր հերթին իրականացնում է իր ենթակա ուժերի անձնակազմի ազդարարում և պատրաստականության բերում:

18. Սողանքային աղետի արձագանքումը բաժանվում է երեք փուլի՝

1) առաջացման սպառնալիքի դեպքում մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների կողմից իրականացվում են՝

ա. սողանքի մանրակրկիտ երկրաբանական ուսումնասիրություն,

բ. կայունացման միջոցառումների համալիրի մշակում և իրականացում՝ պետական ծրագրերով,

գ. բնակչության վերաբնակեցման հարցերի քննարկում և վերաբնակեցման եղանակների ու ֆինանսավորման աղբյուրների հայթայթում.

2) մասնակի փլուզումների առաջացման և մեծածավալ փլուզումների դեպքում մանրակրկիտ հետազոտություններից բացի իրականացվում են՝

ա. մարդկանց որոնում և փրկում,

բ. ֆիզիկապես չտուժած բնակչության տարահանում,

գ. ընտանի կենդանիների տարահանում,

դ. նյութական և մշակութային արժեքների տարահանում,

ե. անհապաղ վթարավերականգնողական աշխատանքների իրականացում,

զ. վերականգնման աշխատանքներ:

## V. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ

19. Մոնիթորինգի համակարգի հիմնումը սողանքային աղետի կանխարգելման հիմնական միջոցառումն է: Դրանց տեղադրման վայրի ճշգրիտ ընտրությունից կախված է մոնիթորինգի արդյունքների ճշտությունը: Այդ նպատակով ուսումնասիրվում է տեղանքը, պարզվում են սողանքային մարմնի չափերը, պոկման պատերը, լեզվակային մասի շարժման ուղղությունները:

Սողանքային տեղամասերում մոնիթորինգն իրականացվում է պարզագույն՝ ձեռնահաս միջոցներից պատրաստած սարքերով կամ ժամանակակից թվային չափիչ սարքերով (ձեռնահաս միջոցներով պատրաստված պարզագույն սարքեր՝ լանջերի վրա

տեղադրվող ցցային բիմեր, պատերի ճաքերի և կրող կոնստրուկցիաների միացման տեղերում փակցվող ժապավեններ, ժամանակակից ճշգրիտ էլեկտրոնային սարքեր՝ մակերեսային ու խորքային տվիչներով):

Մոնիթորինգի համակարգի հիմնումը ենթադրում է տվյալների ավելի հաճախակի վերլուծություն, ինչը կբարձրացնի արձագանքման արդյունավետությունը:

Մոնիթորինգի համակարգի հիմնումն իր մեջ ներառում է նաև սողանքների ակտիվացմանը նպաստող այլ վտանգավոր երևույթների՝ տեղումների քանակի, ձյան շերտի հաստության չափումների արդյունքների վերլուծությունը: Այս միջոցառումների նպատակն է ժամանակի ավելի մեծ կտրվածքում կանխատեսել հետագա զարգացումները:

20. Մոնիթորինգի և վնասների վերաբերյալ տեղեկատվության հավաքումն ու փոխանցումն ենթադրում է սողանքի տեղաշարժի գործիքային ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն և այդտեղեկատվության տարածումը պետական կառավարման բոլոր մակարդակների շահագրգիռ մարմիններին ու շահառուներին:

21. Սողանքների կանխատեսման, դրանց հետագա զարգացման, առաջացրած հետևանքների մասին տեղեկատվության փոխանցումն երկարատև և մանրակրկիտ կազմակերպված ուսուցողական, հետազոտական, ինժեներական և ֆինանսական միջոցառումների համալիր է, որի հիման վրա կազմակերպվում են կանխարգելման և հետևանքների մեղմացման միջոցառումները և արձագանքման գործողությունները:

## VI. ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Սողանքի առաջացումից հետո, մասնակի փլուզման դեպքում առաջ կգան որոնողափրկարարական, տարահանման, բժշկական և կենսաապահովման միջոցառումների անհրաժեշտություն:



23. Սկսած ազդարարման պահից, որոնողափրկարարական ուժերն իրականացնում են մշտական հետախուզություն վտանգավոր տարածքների երկրորդային երևույթների բացահայտման ուղղությամբ, ինչպես նաև աջակցում են բնակչության տարահանման և այլ փրկարարական գործունեությանը վերաբերող տեղեկատվության հաղորդման հարցերում:

24. ՀՀ ԱԻՆ որոնողափրկարարական և հրշեջ-փրկարարական ստորաբաժանումներն իրականացնում են՝

- 1) տուժածների հայտնաբերում,
- 2) անհայտ կորածների հայտնաբերում,
- 3) տուժածներին օգնության ցուցաբերում,

4) վիրավորներին դուրս բերման նպատակով որոնողափրկարարական աշխատանքների իրականացում.

- 5) հրդեհաշիջում:

25. Որոնողափրկարարական աշխատանքների անխափանությունը և օպերատիվությունն ապահովելու նպատակով մարզային և համայնքային ուժերն իրականացնում են՝

- 1) ճանապարհների և մոտեցման ուղիների մաքրում,
- 2) ճանապարհների և ուղիների վնասման դեպքում դրանց վերանորոգում,
- 3) տուժածների շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում,

4) երկրորդային գործոնների ու փրկարարական գործողություններին խոչընդոտող գործոններ վերացնող վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:

26. Ելնելով աղետի մասշտաբներից, ավերվածությունների ծավալից, առկա արձագանքող ստորաբաժանումների քանակից և հազեցվածությունից՝ ՀՀ ԱԻՆ-ը

կարող է հայտ ներկայացվել՝ օգնության նպատակով, հարևան մարզի կամ հանրապետական մարզային ուժերի ներգրավման համար:

Ենթադրվում է, որ սողանքի ժամանակ կլինեն մարդկանց կորուստներ միաժամանակ մի քանի գործոնների ազդեցության շնորհիվ. դրանք առաջին հերթին փլուզումներն են, այնուհետև հրդեհները, ինչպես նաև գազի, վտանգավոր թունավոր նյութերի արտանետումներ, կոմունիկացիաների վնասում, հնարավոր կենսաբանական, քիմիական և ճառագայթային վտանգներ և այլն:

Հնարավոր կենսաբանական, քիմիական և ճառագայթային վտանգների առաջացման դեպքում միջոցառումներն իրականացվում են համաձայն ՀՀ գործող իրավական ակտերով՝ մասնավորապես ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության քիմիական օբյեկտների վթարի կամ քիմիական վտանգի դեպքում բնակչության պաշտպանության պլանը և քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում վթարավերականգնողական գործողությունները հաստատելու մասին» N 861-Ն, 2015 թվականի օգոստոսի 18-ի «Կենսաբանական վարակվածության օջախներում փրկարարական աշխատանքների իրականացման կարգը հաստատելու մասին» N 967-Ն, 2012 թվականի հոկտեմբերի 4-ի «Քաղաքացիական պաշտպանության վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասագերծման ու վարակագերծման կարգը սահմանելու մասին» N 1297-Ն որոշմներով և ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ճառագայթային և միջուկային վթարի դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանին հավանություն տալու մասին» N8 արձանագրային որոշմամբ սահմանված նորմերի:

27. Որոնողափրկարարական աշխատանքների իրականացման ժամանակ օգտագործվում են տեխնիկական որոնման սարքեր (կարող են կիրառվել փրկարարական շներ):

Սողանքի ակտիվացման դեպքում արդյունավետ որոնողափրկարարական գործողությունների ժամկետը կլինի մինչև 3 օր, այդ իսկ պատճառով համայնքի ղեկավարության կողմից պետք է ձեռնարկվեն միջոցառումներ մարդկանց փրկման ուղղությամբ՝

1) արագ ազդարարել ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումներին,

2) ձեռնարկել միջոցներ համայնքում առկա ինժեներական տեխնիկայի ներգրավման ուղղությամբ,

3) ձեռնարկել միջոցներ կամավորականների ու քնակչության ներգրավման ուղղությամբ,

4) ազդարարել մարզպետարանին և ներկայացնել օգնության հայտ:

28. Որոնողափրկարարական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է պլաններով ստեղծել արտակարգ իրավիճակների ղեկավարման շտաբ, տեղեկատվության հավաքի և փոխանցման համակարգ, տրանսպորտային համակարգ, ինչպես նաև մշակել շահագրգիռ մարմինների միջև փոխհամագործակցության համակարգ:

29. Սկսած մասնակի փլուզումների առկայությունից կարող է առաջանալ համայնքի տուժած քնակչության տարահանման անհրաժեշտությունը: Տարահանումը պետք է նախատեսվի առնվազն երեք օրվա հաշվարկով, ինչը նվազագույն ժամանակահատվածն է սողանքի հետևանքների վերացումից հետո փլուզված, վնասված հատվածի մանրակրկիտ հետազոտության համար՝ հետագա օգտագործման հնարավորության համար:

30. Տարահանման որոշումն ընդունում է արտակարգ իրավիճակների (մարզպետ) կամ տարահանման հանձնաժողովի նախագահը (փոխմարզպետ/համայնքապետ):

31. Արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահի կամ այլ ղեկավարի կողմից տարահանման նախապատրաստման կամ անցկացման որոշումն իր մեջ ներառում է՝

- 1) պատճառ, որ պահանջում է կատարել տարահանում,
- 2) տարածք, որտեղից իրականացվում է տարահանում,
- 3) տարահանման երթուղի,
- 4) տարահանման տեղանքը և նրա բաշխվածությունը,

5) տարահանման միջոցառումներին զուգորդող միջոցառումներ՝ բժշկական օգնություն և սպասարկում, անվտանգության ապահովում և կենսաապահովում:

32. Տարահանման նախապատրաստման և անցկացման հրահանգ ստանալուց հետո իրականացվում են ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումները (ըստ համայնքի տարահանման պլանի):

#### VII. ՀՐԱՏԱՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

33. Որոնողափրկարարական աշխատանքներին զուգահեռ, անհրաժեշտության դեպքում իրականացվում են՝ հրդեհաշիջման, վթարավերականգնողական աշխատանքներ, հայտնաբերված տուժածների բժշկական օգնություն և սպասարկում, մոտեցման ճանապարհների մաքրում, որոնողափրկարարական աշխատանքների նյութատեխնիկական միջոցներով ժամանակին մատակարարում, որոնողափրկարարական աշխատանքների անվտանգության ապահովում, ընդհանուր անվտանգության ապահովում:

34. Վերը նշված գործառույթների իրականացման նպատակներն են՝

- 1) բնակչության կյանքի, առողջության և ունեցվածքի պահպանում,
- 2) հանցագործությունների կանխում և կանխարգելում,
- 3) ճանապարհային երթևեկության կարգ ու կանոնի պահպանում,

4) ազատված տարածքների ու տարահանման վայրերի հասարակական կարգի պահպանում,

5) էլեկտրացանցերին, գազատարներին, ջրատարներին և ջրահեռացման համակարգերին, հեռահաղորդման ուղիներին, ճանապարհներին ու ինժեներական կառույցներին, շենք-շինություններին հասցված վնասի գնահատումը և նրանց վերականգման հեռանկարները,

6) փրկարարական, հրդեհաշիջման, բժշկական և վթարավերականգնողական ուժերի աղետի գոտի մուտքի ապահովումը,

7) տարահանման կազմակերպումը,

8) խմելու ջրով և սննդով մատակարարումը:

35. Հրատապ միջոցառումների համար կարևոր նախապայման է հանդիսանում տրանսպորտային ապահովումը, որը ներառում է սահմանափակ կարողություններով, հղի կանանց, երեխաների ու ծերերի տրանսպորտով տարահանում, առաջին անհրաժեշտության պարագաների, տաք հագուստի ու վառարանների մատակարարում, շինարարական աղբի ու հողաքարակույտերի տեղափոխում, դիակների տեղափոխում և այլն:

36. Տրանսպորտային ապահովումն իրականացվում է մարզպետարանների, պետական կառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների կողմից:

#### VIII. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ԻՄԵԼՈՒ ՋՈՒՐ ԵՎ ՄՆՈՒՆԴ

37. Տարահանման, առաջին օգնության, այդ թվում շտապ և անհետաձգելի բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպում է մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, ինչը ներառում է՝

1) տուժածների և վիրավորների մասին տեղեկատվության հավաք,

2) բժշկական անձնակազմի տեղափոխում աղետի վայրին մոտ գտնվող անվնաս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն,

3) հիգիենայի և սանիտարական պայմանների երկարատև ապահովում,

4) հոգեբանական օգնության ցուցաբերում (անհրաժեշտության դեպքում),

5) այլ մարզերից օգնության խնդրանք,

6) վիրավորների և տուժածների տեղափոխում:

38. Տուժածներին, որոնց հնարավոր չէ օգնություն ցույց տալ տեղում, տեղափոխում են հիվանդանոցներ:

39. Սողանքի դեպքում բժշկական օգնությունն ու սպասարկումն իր մեջ ներառում է՝

1) տուժածների առաջին բժշկական օգնության ցուցաբերում, էտապայնության ապահովում և սահմանված կարգով մասնագիտական բժշկական կազմակերպություններ տեղափոխում,

2) տարահանման միջոցառումների ու տարահանման երթուղիներում բժշկական օգնության և սպասարկման ապահովում,

3) տարահանման վայրերում բժշկական, սանիտարական և հակահամաճարակային իրավիճակի հսկողություն:

40. ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումն ապահովում է սողանքի գոտու և տարահանման վայրերի սանիտարահամաճարակային իրավիճակի հսկողություն, անհրաժեշտության դեպքում օպերատիվ կերպով պարզում է վնասված օբյեկտները:

41. Մարզպետարանի առևտրի և կոմունալ ստորաբաժանումները պատասխանատու են խմելու ջրով և սննդամթերքով ապահովման համար:

42. Խմելու ջրով և սննդամթերքով պետք է ապահովվեն տուժած բնակչությունը, փրկարարական և վթարավերականգնողական, աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված այլ արձագանքող ստորաբաժանումները:

43. Տուժած բնակչության խմելու ջրով և սննդամթերքով ապահովումն իրականացվում է տարահանման վայրերում: Այդ նպատակով օգտագործվում են մարզի առկա, ինչպես նաև պետության կողմից տրամադրվող միջոցները:

44. Փրկարարական ու վթարավերականգնողական, աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված այլ արձագանքող ստորաբաժանումների խմելու ջրով և սննդամթերքով ապահովումն իրականացվում է համապատասխան ստորաբաժանումների կողմից:

45. Վթարավերականգնողական աշխատանքներն իրականացվում են մարզպետարաններում և քաղաքապետարաններում այդ ոլորտների պատասխանատու ստորաբաժանումների, հասարակական փրկարարական կառույցների, վթարված ենթակառուցվածքների վթարային արձագանքման խմբերի, ոլորտը կարգավորող գործադիր մարմինների ուժերով և միջոցներով:

46. Արձագանքող վթարային խմբերի, հասարակական փրկարարական կառույցների և կազմակերպությունների գործողությունների համակարգումը վերապահված է սողանքային աղետի կառավարման բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին՝ ՀՀ ԱԻՆ-ին:

47. ՀՀ ԱԻՆ-ը իր լիազորությունների շրջանակում իրականացնում է վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և բոլոր ներգրավված մարմինների և կազմակերպությունների գործողությունների համակարգումը, որն ապահովվում է փոխհամագործակցության պլանների կամ պայմանագրերի միջոցով: Այս նպատակով աղետի գոտում ՀՀ ԱԻՆ կողմից ծավալվում է աղետի հետևանքների վերացման մարմին, որն ապահովում է տեղեկատվության ստացումը, վերլուծումը, դրանք շահառուներին տրամադրումը և բնակչությանն իրազեկելու համար աշխատանքների ընթացքի մասին պարբերաբար զեկույցների պատրաստումը:

48. Սողանքային աղետի հետևանքների վերացմանը ներգրավված մարմինները մշակում են սույն պլանից բխող իրենց պլանները, որով կանոնակարգվում են յուրաքանչյուրի գործողությունները, ինչպես նաև, միմյանց շահերից ելնելով, գործողությունների կատարման կարգն ու ժամկետները:

49. Հակասողանքային միջոցառումներն իրականացվում են համայնքների, մարզպետարանների, գործադիր մարմինների ու կազմակերպությունների կողմից՝ կախված սողանքի սպառման հատվածի պատկանելիությունից և կարգավորման ոլորտից:

#### IX. ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄԸ

50. Սողանքային աղետի մեղմացմանն ուղղված միջոցառումներն են՝

- 1) բնակչության մասնակցության խթանում,
- 2) բնակելի շենքերի վերանորոգում և ուժեղացում,
- 3) ջրի անտեղի օգտագործման վերահսկում և պատշաճ դրենաժավորում,
- 4) լանդշաֆտի ձևափոխման և բնական պայմանների, օրինակ՝ լայնածավալ փորման և ծառահատման վերահսկում,
- 5) սողանքի հետևանքով առաջացած ձևափոխության հստակեցում (ճաքեր և ջրի չվերահսկվող հոսք) և նման իրավիճակի մասին տեղեկացում համայնքապետարանին և այլն,
- 6) արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ գիտելիքի և տեղեկատվության հասանելիության ընդլայնում:

51. Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործողություններն են՝

- 1) արտակարգ իրավիճակների դեպքում կոնտակտային համարների հաստատում և գրանցում,
- 2) նյութական արժեքների, առաջին անհրաժեշտության պարագաների՝ շարժական ռադիո, գրպանի լապտեր, դեղորայք, փաստաթղթեր, տաք հագուստ, երեք օրվա ջուր և սննդամթերք պարունակող ուսապարկերի ապահովում,
- 3) ընտանիքի անդամների՝ աղետի ժամանակ պարտականությունների նախապես



հատակեցում. որոշման կայացում հավաքի վայրի վերաբերյալ, հաղորդակցության միջոցառումներ,

4) սկսել մասնակցություն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպված ուսուցմանը և այլ միջոցառումներին,

5) տեղեկատվության տրամադրում համատիրություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին ընտանիքի հատուկ խնամքի կարիք ունեցող անդամների մասին:

52. Մեղմացման միջոցառումների իրականացման գործում ՀՀ պետական կառավարման մարմինների գործառնություններն են՝

1) սույն պլանում նշված գործողությունների իրականացում և պլանի իրագործմանն աջակցություն ցուցաբերելը,

2) պլանի իրականացման ընթացքի մոնիթորինգի իրականացում,

3) պլանի իրականացման արդյունքների գնահատում,

4) հակասողանքային միջոցառումների ներառումը միջնաժամկետ ծախսային ծրագրերում:

## X. ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

53. Արտակարգ իրավիճակների ոլորտի պետական լիազորված մարմնի գործառնություններից է բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացումը՝ մեղմացման գործողությունների խթանման նպատակով, ինչը կհանգեցնի արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանը:

54. Բնակիչների դերը՝

1) բնակչության համապատասխան պատրաստվածության մակարդակի ապահովում՝ աղետի հետևանքներից խուսափելու համար՝ ելնելով սողանքի ակտիվացման դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ հստակ գիտելիքի տրամադրումից՝ հիմնվելով «Դու պետք է պաշտպանես քո կյանքն ու ունեցվածքը» գաղափարի վրա,

2) սողանքային աղետի ռիսկի մեղմացման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործողությունների նախապես իրականացում՝ սեփական նախաձեռնությամբ,

3) բազմաբնակարան շենքերի և բնակելի տների վերանորոգման և ուժեղացման աշխատանքների իրականացում,

4) խուսափում ջրի անտեղի օգտագործումից և պատշաճ ջրահեռացման իրականացում (դրենաժավորում),

5) լանդշաֆտի և բնական պայմանների ձևափոխման իրականացումից խուսափում, օրինակ՝ լայնամասշտաբ փորում և ծառահատում,

6) սողանքի հետևանքով առաջացած ձևախախտման ճանաչում (ճաքեր և ջրի չվերահսկվող հոսք) և նմանատիպ իրավիճակի տեղեկացում համայնքապետարանին,

7) արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ գիտելիքի և տեղեկատվության հասանելիության ընդլայնում:

## XI. ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ

55. Տեղեկատվության տարածման մեթոդներն են՝

1) հանդիպումներ համայնքներում,

2) ցուցումների և մեթոդական օժանդակության տրամադրում անձանց և կազմակերպություններին, համայնքապետարաններին և կառավարման այլ մարմիններին,

3) բնակչության ծանոթացում արտակարգ իրավիճակներում գործելու առկա

հրահանգների և ռիսկերի քարտեզների հետ,

4) կրթական թերթիկների, վավերագրական ֆիլմերի և քարոզչական այլ նյութերի պատրաստում և տրամադրում,

5) տեղեկատվության տրամադրում զանգվածային լրատվամիջոցների միջոցով,

6) սեմինարների, ցուցահանդես-վաճառքների կազմակերպում, քարոզչական վահանակների տեղադրում:

56. Բնակչության շրջանում տարածվող տեղեկատվությունը պետք է պարունակի՝

1) տեղեկատվություն սողանքի բնույթի վերաբերյալ,

2) սողանքի առաջացման մեխանիզմների, սողանքի հետևանքով առաջացած ձևախախտման բնույթի վերաբերյալ հասարակ և հասանելի բացատրություն, ինչպես նաև սողանքի բաշխվածության քարտեզների և սողանքի գրանցամատյանների ընկալում,

3) տեղեկատվություն արտակարգ իրավիճակների մարմինների՝ սողանքային աղետին պատրաստվածության ապահովման ընթացիկ աշխատանքների մասին,

4) բնակչության ծանոթացում ՀՀ ԱԻՆ և այլ մարմինների կողմից իրականացվող միջոցառումների և յուրաքանչյուր համայնքի աղետների կառավարման պլանի հետ,

5) տեղեկատվություն անձնական անվտանգության ապահովման կանխարգելիչ միջոցառումների մասին,

6) տեղեկատվություն բնակչության հավաքակետերի և ապաստարանների, ըստ բնակավայրերի կազմված տարահանման քարտեզների կիրառմամբ տարահանման հրամանի և անվտանգ երթուղիների մասին,

7) տեղեկատվություն երթևեկության վերահսկման կարգի մասին,

8) տեղեկատվություն փրկարարական և առաջին բուժօգնության գործընթացի մասին:

## XII. ՍՈՂԱՆՔԱԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

57. Սողանքավտանգ տարածքներում հիմնականում տեղակայված են գյուղական համայնքներ, որտեղ ի տարբերություն քաղաքային համայնքների, բնակչության բարեկամական կապերն ավելի սերտ են, ինչն էլ թույլ է տալիս առաջացած մարտահրավերներին առավել միասնական դիմակայել:

58. Համայնքի դերը՝

1) համայնքները, միմյանց հետ համագործակցելով, պետք է հիմնեն կազմակերպչական շրջանակ աղետներին նախապատրաստվելու համար «սողանքակայուն ավելի ուժեղ համայնք ստեղծելու» գաղափարի ներքո,

2) համայնքի, ինչպես նաև համայնքի յուրաքանչյուր բնակչի աղետի կառավարման վերաբերյալ իրազեկվածությունն ու կարողությունները բարձրացնելու նպատակով համայնքի բոլոր բնակիչները պետք է իրականացնեն սողանքային աղետի մեղմացման և դրան պատրաստվածության գործողություններ:

59. Առաջարկվում է համայնքների կողմից սողանքային աղետի մեղմացման հետևյալ գործառնությունները՝

1) աղետների կառավարման խմբերի ստեղծում և զարգացում,

2) աղետի կառավարման պլանի մշակում,

3) սողանքի շարժի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, սահմանված կարգով պետական կառավարման մարմիններին խնդրի ներկայացում,

4) համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների անվտանգության ապահովում, վերանորոգում և օգտագործման վերահսկում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ քանդում և տեղափոխում անվտանգ տարածք,

5) աղետների վերաբերյալ կրթության և ուսուցման խթանում,

6) սողանքային տեղամասերում, խիստ անհրաժեշտության դեպքում, մասնագիտական եզրակացության հիման վրա միայն թեթև կոնստրուկցիաներով շինարարության նպատակով թույլտվությունների տրամադրում, իսկ առավել վտանգավոր տեղամասերում՝ շինարարական աշխատանքների խստիվ արգելում:

60. Առաջարկվում է համայնքների կողմից սողանքային աղետի պատրաստվածության հետևյալ գործառույթները՝

1) ջրի, սննդի և առաջին անհրաժեշտության պարագաների պահեստավորում, աղետի կառավարման սարքավորումների պահեստավորում, սպասարկում, պարբերաբար ստուգում.

2) համայնքի բնակիչների, օգնության կարիք ունեցող մարդկանց ցուցակների և աղետի կառավարման կազմակերպությունների կոնտակտային ցուցակի ստուգում,

3) աղետի կառավարման քարտեզի ստեղծում, ապաստարանների նախապատրաստում և դրանց վերաբերյալ ծանուցում,

4) համայնքի բնակիչների, հատկապես՝ խոցելի մարդկանց պաշտպանության, աջակցման նախապատրաստում,

5) արձագանքման կարողությունների բարելավում և ուսումնավարժանքների ու սեմինարների միջոցով սողանքային աղետի ժամանակ կատարվելիք գործողությունների վերաբերյալ խորհրդի տրամադրում:

